ՊՐՈՖ. ՄԻՇԵԼ ՎԱՆ ԷՍԲՐՈՒԿ (ՄՅՈՒՆԽԵՆ)

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԿՍԱԾ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ Բ-ԻՑ ՄԻՆՉԵՎ ԼԵՎՈՆ Գ՝

689 - 717 թվականներին վերաբերող գրականությունը բավական մեծացել է: Դարաշրջանի հայ մատենագրության բնագավառում կատարված տարբեր հետազոտությունների շնորհիվ հանգել ենք այս դարաշրջանին վերաբերող ավանդական պատկերացումներից փոքր-ինչ տարբերվող եզրահանգման: Առաջին հերթին մեզ հետաքրքրում է, թե կայսեր կողմից աղավաղման ենթարկված քաղաքական շարժառիթներն արդյո՞ք անկախ են եկեղեցու վարդապետության հարցերից: Երկրորդ՝ կարծում ենք, որ գտել ենք Լևոն Գ-ի պատկերամարտ քաղաքականությանն առնչվող մի հայկական սկզբնաղբյուր, որը չի ընդգրկվել ո՛չ Հանս Գեորգ Թյումելի 1992 թ. հրապարակած սկզբնաղբյուրների մեծ ժողովածուում[1], *ո՛չ 1986 թ. Սպոլետոյի ընթերցումներում Պ. Շռայների ներկայացրած պատկերամարտներին վերաբերող համադրական պատկերում*[2], *ո՛չ էլ Ժ. Դագրոնի՝ եկեղեցու պատմությանը նվիրված կարճ ակնարկի նոր շարադրանքում*[3]:

Ուրեմն՝ սկզբում անդրադառնանք Հուստինիանոս Բ-ի քաղաքականությանը, այնուհետև Հայոց կաթողիկոս Սահակ Գ-ի վերջին հանձնարարականներին՝ ուղղված Հայաստանի կառավարիչ Սմբատ Բագրատունուն, և այն բարեկամությանը, որը նրան կապում էր արևմտյան Կովկասում աքսորի մեջ գտնվող Լևոն սպաթարի հետ:

33-ամյա Կոստանդին Դ-ի մահից հետո, նրա որդի Հուստինիանոս Բ-ը 685 թ. սեպտեմբերին 16 տարեկան հասակում կայսր դառնալով, տասը տարի բախտի

---

* Այս հետազոտությունը զեկուցման տեսքով ներկայացվել է 1986 թ. օգոստոսին Կոպենհագենում կայացած բյուզանդագետների միջազգային կոնգրեսին:

1 Hans Georg Thümmel, Die frühgeschichte der ostkirchlichen Bilderlehre. Texte und Untersucungen zur Zeit vor dem Bilderstreit, Berlin 1992.

2 Peter Schreiner, Der byzantinische Bilderstreit: kritische Analyse der zeitgenössischen Meinungen und das Urteil der Nachwelt bis heute, տե՛ս Bisanzio Roma e l'Italia nell'alto Medioevo 3-9 aprile 1986, Spoleto 1988, p. 319-427 (=Settimane di studio del Centro Italiano di studi sull'alto medioevo, 34,1).

3 G.Dagron, L'Église et la Chrétienté byzantines entre les invasions et l'iconoclasme (VIIe-début VIIIe siècle), et L'iconoclasme et l'établissement de l'Orthodoxie (726-847), տե՛ս J.-M-Mayeur et alii, Histoire du christianisme des origines à nos jours, t.4(Paris 1993), Évêques, Moines et Empereures (610-1054), p.9-165.

քմահաճույքին ենթարկվեց, ապա գահընկեց արվեց, հատվեց նրա քիթը (այստեղից էլ նրա կճատ կամ Ռինոտմետ անվանումը) և աքսորվեց Խերսոն: Այնուհետև՝ խազարների, ապա բուլղարների հետ դաշինքի շնորհիվ, 705 թ. վերահաստատվեց Կոստանդնուպոլսում, ուր անխնա վրիժառությամբ հաշվեհարդար տեսավ իր թշնամիների հետ, մինչև որ սպանվեց 713 թ.: Հերակլի տոհմի վերջին ներկայացուցչի ողբերգական ճակատագիրը կարո՞ղ է արդյոք մեկնաբանվել միայն նրա միապետական և բռնի բնավորությամբ: Կարծում ենք, որ այս խնդրում աստվածաբանական հարցերն ավելի մեծ ազդեցություն են ունեցել, քան այդ մասին սովորաբար գրվում է:

Հուստինիանոս Բ–ը իբրև չափանիշ միշտ ունեցել է իր փառահեղ նախնի՝ Հուստինիանոս Ա–ի օրինակը ոչ միայն ամուսնական գործերում (նրա խաղար կինը մկրտվել է Թեոդորա անունով), այլ նաև արևմուտքի նկատմամբ իր հետաքրքրությամբ և եկեղեցական քաղաքականությամբ: Կայսրության բոլոր քաղաքացիներին քրիստոնեական խղճի ազատություն տալու կամքը այն կետն է, որն ավելի լավ է լուսաբանում նրա վերաբերմունքը: Եկեղեցու գործերի նկատմամբ նա պակաս ուշադիր չէ, քան Հուստինիանոս Ա–ը:

Երկկողմ պայմանագրերով Արևելքի խաղաղության ամրապնդումը նրան թույլ չէր տալիս չրջանցել դավանական խնդիրները: Իր թագավորության չորրորդ տարում Հուստինիանոսն արշավեց Հայաստան և երեսուն հազար զինվոր թողեց Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի իշխանների մոտ[4]: Արդեն 589/90 թ., Հուստինիանոսի կառավարման հինգերորդ տարում, Հայոց ժամանակագրությունը պատմում է նրա քաղկեդոնական ձգտումների մասին. Հաշտություն կնքելու համար Կոստանդնուպոլիս են հրավիրվում հինգ հայ եպիսկոպոսներ, սակայն համաձայնությունը երկար չի տևում, քանի որ այդ եզրակացությամբ է ավարտվում «Narratio»–ն, որն էլ Հինգվեցյան ժողովի մասին դեռևս ոչինչ չգիտե[5]: Այս ժողովը, ինչպես այդ մասին վկայում է հայսմավուրքային մի տեղեկություն, հրավիրվել է նույն կայսեր նախաձեռնությամբ հուլիսի 15–ին և ավարտվել հավանաբար սեպտեմբերի 15–ին: Միևնույն ժամկետին հանդիպում ենք նաև քահանաների երկրորդ ամուսնությունից ծնված երեխաների մասին խոսող Հինգվեցյան ժողովի Գ կանոնում[6]: Հինգվեցյանի ԼԲ կանոնում հանդիպում ենք մի վիճաբանական դրույթի, որը հենված է Հովհաննես Ոսկեբերանի մի հատվածի վրա (տե՛ս Iohannem, Homélie 85, PG 59, 463, 24-31): Նույն հղումն օգտագործված է անապականական միտում ունեցող մի ընդարձակ երկում, որը կրում է Սահակ Զորափորեցու անունը: Այս հատվածի հայրաբանական քննությունը ցույց է տալիս դրա նույնությունը 680 թ. ժողովի թշնամիների

---

4 G.Garritte, La narratio de rebus armeniae, Louvain 1952, p. 350-353, այստեղ հղվում է Ստեփանոս Տարոնացին:

5 Այս միտքը զարգացրել եմ իմ Armenien und die Penthektè, տե՛ս Annuarium Historiae Conciliorum, 24(1992), p. 80-82 ուսումնասիրության մեջ:

6 Այս միտքը զարգացնում ենք Annuarium Historiae Conciliorum հանդեսին ներկայացրած մեր Justinian II. Im Synaxar and das Konzil in Trullo հոդվածում:

կողմից օգտագործված փաստաթղթերի հետ: ԼԲ կանոնը պարտադրում է պատարագի գինուն ջուր խառնել: Ոսկեբերանի հատվածի հայկական մեկնությունը մերժում է ջուր խառնելու սովորությունը: ԼԲ կանոնը ակնհայտորեն պատասխանում է դրան՝ ընդգծելով, որ Ոսկեբերանը նկատի է ունեցել հին ժամանակների ջրախառներին (Acquariens), որոնք իրականում ցանկանում էին սրբագործել ջուրը և ոչ թե գինին: Այս պատասխանի իրավացիությունը անհավանական է դարձնում այս փաստարկը Սահակ Զորափորեցու ձեռքին: Այսպիսով, հայկական ավանդույթի այս կարևորագույն բնագիրը[7] կարելի է թվագրել 691 թ. քիչ առաջ ընկած ժամանակով:

Մի այլ կանոնական հայերեն բնագիր որոշակիորեն անհամատեղելի է մնում հայկական ավանդույթին: Այստեղ պատմվում է Թեոդոսուպոլիս-Կարինում ոմն Հուստինիանոս կայսեր օրոք տեղի ունեցած ինչ-որ ժողովի մասին: Կանոնների չարահյուսական դարձվածքները Հինգվեցյանից դրանց ազդված լինելն են վկայում: Ուրեմն խոսքը վերաբերում է Հուստինիանոս Բ-ին[8]: Որևէ թվական հայտնի չէ: Այս ժողովը, ակնհայտորեն հակադրվելով Հինգվեցյանի բոլոր հակահայկական կանոններին, զիջում է հայերին նրանց սովորույթների և մասնավոր ծեսերի կատարման իրավունքը, բացի Քաղկեդոնի դեմ հակադրվելուց: Մեկից ավելի հայերեն բնագրեր վկայում են, որ վեց կաթողիկոսներ, Հերակլի ժամանակակից եզրից մինչև Հովհաննես Օձնեցու նախորդ եղիան, շնորհիվ միակամության ընդունման, քաղկեդոնականներ են եղել, որից հրաժարվել են միայն 680 թ.: Մինչև այսօր մերժվում էր պատմական իրականության հետ ժողովի բնագրի համապատասխանելիությունը, պատկերվում էր ամբողջապես անհավաստի մի ժողով: Այնուամենայնիվ արդեն այդ կանոնախմբի ձևակերպումներից կարելի է ենթադրել, որ Հինգվեցյանը մինչ այդ արդեն տեղի էր ունեցել: Պարզապես թվում է, թե Հուստինիանոս Բ-ը ցանկանում էր, որ Հայաստանի սովորույթներին և ավանդույթներին առնչվող երկրորդական ծիսական հարցերը չխանգարեն եկեղեցական միությանը, որը նա ուզում էր ամրապնդել ամենից առաջ 691 թ. միությամբ: Թեպետև այս բնագրին վերաբերող որևէ ճշգրիտ կռվան չունենք, այնուամենայնիվ այն պետք է թվագրել Կովկասում արաբների հաստատումից առաջ ընկած ժամանակաշրջանով: Ըստ Հովհաննես կաթողիկոսի, 695 թ. եկեղեցիները թալանվել էին[9]: Մուհամմեդ իբն Մրվանը Հայաստան է եկել 697 թ. և թալանել Սուրբ Գրիգոր վանքը 703 թ.[10]: Միաժամանակ, նույն 695 թ.

---

7 Տե՛ս Armenien und Penthektè, p. 84-88, ծանոթ. 4:

8 Ֆրանսերեն թարգմանությունը տե՛ս M.vanEsbroeck, Le discours du Catholicos Sahak III en 691 et quelques documents annexes au Quinisexte, տե՛ս George Nedungatt et M.Featherstone, The Council in Trullo revisited, Rome 1995, p. 439-445 և 360-362:

9 J.Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam depuis la conquête arabe jusqu'en 886, նոր հրատարակությունը վերանայված և հրապարակված Մ. Կանարի կողմից, տե՛ս Lisbonne 1980, p. 199, ծանոթ. 29 (այսուհետև՝ Canard-Laurent):

10 Նույն տեղում, էջ 414:

Հուստինիանոս Բ-ը գահընկեց է արվել և կճատվել: Ե՞րբ է տեղի ունեցել մեզ հետաքրքրող ժողովը:

Կարծում ենք, այստեղ արժե մեջբերել հայ պատմիչ Ղևոնդի Զ գլուխը. «Յետ այնորիկ զոր պատմեցաք՝ դարձեալ զոր առաքէր արքայն Յունաց որում Ափսիմերոսն (Ափսեմերոսն) կոչէին, որ փոխանակ Յուստինոսի (Յուստիանու) կայսեր. և հրամայէր ունել զՍմբատ (Սմպատ, զՍմպատ) որդի Վարազտիրոցի, որպէս թէ քինախնդիր եղեալ՝ զոր կրճատեաց նա ի զօրացն Յունաց վասն մահուանն հօրն իւրոյ Վարազտիրոցի, զոր սպանին Հոռոմք: Եւ եկեալ պատերազմեցան ընդ նմա ի մօրամէջ դաշտին Պայիկայ. և բազում եղեն հարուածք զօրացն Հայոց զի նուազունք էին: Անկան և ի զօրուէն Յունաց յոլովք: Իբրև ետես Սմբատ, եթէ ոչ կարէին զդէմ ունել զօրացն Յունաց՝ փախստական եղեալ գնաց մազապուրծ (մազապուր) սակաւ արամբք. և զօրքն Յունաց դարձան յաշխարհն իւրեանց»[11]: Ընդգծել ենք այն հատվածը, որն, ըստ մեր տեղեկության, չի գրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Մեզ հետաքրքրում է «կրճատել» բառը, որն անհնար է առանձնացնել կճատել–անդամահատելուց, որին, 695 թ., ենթարկվել էր Հուստինիանոսը: Եթե հիշենք, որ 30.000 հույներ մնացել են Հայաստանում, Վրաստանում և Աղվանքում, ինչպես տեղեկանում ենք Թեոդոսուպոլսի ժողովի բոլոր երեք վկայություններից, ապա մեծ է հավանականությունը, որ նրանցից շատերը հավատարիմ են մնացել Հուստինիանոս Բ-ին: Թեպետ այլևս ոչինչ չգիտենք Վարազտիրոցի անձնավորության մասին, այնուամենայնիվ հավանական է, որ նա պաշտպանում էր նրանց, ովքեր ընդունում էին Թեոդոսուպոլսի ժողովը: Հակազդեցությունը գալիս էր Կոստանդնուպոլսից, ուր անդամահատվել էր կայսրը: Վարազտիրոցը, ավելի քան մի հույն, համաձայնություն էր փնտրում նույն եղանակով: Նա պատժվեց: Նրա որդի Սմբատը ապստամբեց, Հուստինիանոս Բ-ի երկրորդ հաջորդ Տիբերիոս Ապսիմարոսը 698 թ. մի պատժիչ զորաբանակ ուղարկեց: Գլխավոր մեղավորն այն ժամանակ հասցրեց փախչել: Այսպիսին է այս հատվածի բովանդակությունը:

Ո՞վ էր Հուստինիանոս Բ-ի առաջին հակառակորդը Կոստանդնուպոլսում: Բնականաբար, մատնանշում են նրա հարկային քաղաքականությունը, ազնվականության նկատմամբ նրա արհամարանքը, չինությունների նկատմամբ նրա անապարդ ճաշակը և մի շարք դժնդակ իրադարձություններ, որոնց մասին

---

11 "Après ce que nous avons dit, l'empereure des Grecs qu'on appelle Apsimaros et qui règnait à la place de Justinien, envoya une troupe. Il donna l'ordre de saisir Smbat fils de Varaztirotz, *vu qu'il se vengeait de qui en avait mutilé parmi les troupes grecques à cause de la mort de son père Varaztirots* que les Romains avaient exécuté. Il vint et fit une bataille avec lui dans les marais de la plaine de Payik, et beaucoup parmi les troupes de Arméniens furent blessés car il eurent le dessous. Ils tombèrent à cause de la force du nombre des Grecs. Quand Smbat vit qu'il ne pouvait s'opposer aux forces des Grecs, il prit la fuite et s'en alla sauvé de justesse avec quelques hommes, et les forces des Grecs retournèrent dans leur pays": Ռուսերեն թարգմանում ենք հատվածը Կ. Եղանցի հրատարակած բնագրից (տե՛ս Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 19). [փակագծերում տալով ձեռագրական տարընթերցումները – Ա.Բ.]: Բազմաթիվ տարբերությունների մեկնաբանությունը տե՛ս Canard-Laurent, p.243, ծան. 93 և 262-263:

պատմում է Թեոփանեսը իր ժամանակագրության մեջ: Երբեք չմերժելով, որ դրանց մեջ լուրջ հիմքեր կան Հուստինիանոս Բ-ի վտարումը հասկանալու համար, պետք է այնուամենայնիվ մասնավոր ուշադրություն դարձնել պատրիարք, սկզբում Բլախեռնի եկեղեցու պաշտոնյա՝ Կալինիկոս Բ-ի անձնավորության վրա, որը 694 թ. պատրիարք դարձավ: Պատրիարքն անմիջապես նպաստեց Լևոնի, որը կառավարեց հազիվ երկու տարի, և ապա նրա հաջորդ Տիբերիոս Գ Ապսիմարիոսի թագադրությանը, որի մասին արդեն ասվեց վերևում: Երբ Հուստինիանոսը դաշինք հաստատեց Բուլղարների արքա Տեռվելի հետ, վերադառնալով Կոստանդնուպոլիս այլևս ուժ չգործադրեց քաղաքի նկատմամբ: Նա մի փոքր խմբի հետ ջրամատակարարման գծերով ներս մտավ և կրկին հայտնվեց քաղաքում՝ որևէ դժվարություն չունենալով անհրաժեշտ թվով մարդ գտնել գահն իրեն վերադարձնելու համար: Ինչպես իրավացիորեն նկատել է Օստրոգորսկին, սա ցույց է տալիս, որ նա միշտ կողմնակիցներ է ունեցել քաղաքի ներսում[12]: Երբ կայսրը պատիժներ ձեռնարկեց իրեն հասցված վիրավորանքների համար, առաջին մարդը, որը թիրախ դարձավ, պատրիարք Կալինիկոսն էր: Ըստ ոմանց, նա հանել է տվել նրա աչքերը: Սակայն կա մի այլ, ավելի հանգամանալի պատմություն, որն ունի կրկնակի առավելություն: Մի կողմից այն մտել է Կոստանդնուպոլսի հայսմավուրք, և մի ավելի վերամբարձ ոճով՝ Բարսեղի մենախոսություն: Մյուս կողմից, այս պատմությունն ունի Հուստինիանոսին գահից հեռացնելու վերաբերյալ մի շարք, ավելի աշխարհիկ փաստարկներ, որոնց անդրադարձել է Թեոֆանեսը[13]: Ահա այդ պատմությունը ըստ իր աշխարհիկ գունավորման:

Աշխարհի ստեղծման 6186 թ., այսինքն՝ 694/695 թ., "Կայսրը Կալինիկոս պատրիարքից պահանջում էր աղոթել պալատի մոտ գտնվող Սուրբ Աստվածածնի եկեղեցին քանդելու համար: Նա ուզում էր այդ տեղում ջրավազան և վենետների համար տրիբունաներ կառուցել՝ կայսերն այստեղից ընդունելու համար: Պատրիարքն ասաց. «Եկեղեցի կառուցելու համար աղոթք ունենք, սակայն եկեղեցի քանդելու համար մեզ աղոթք չեն ավանդել»: Երբ կայսրը, ամեն գնով պահանջելով աղոթքը, ճնշում գործադրեց, պատրիարքն ասաց. «Փա՛ռք միշտ համբերող Աստծուն, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից, ամեն»: Այդ խոսքերը լսելով, քանդեցին եկեղեցին և ջրավազան կառուցեցին, իսկ մետրոպոլիտի եկեղեցին շինեցին Պետրիոնում"[14]: Այս պատմությունը, որը, Հուստինիանոսի հրաժարականի պատճառով, ավելի լավ է ներդաշնակում փոփոխվող հայացքների հետ, Հայսմավուրքի մեջ վարդապետական ավելի մեծ ճաշակով է ներծծված:

---

12 G.Ostrogorsky, Geschichte des hyzantinischen Staates, Munich 1963³, 118-120.

13 Համապատասխանաբար տե՛ս H.Delehaye, Synaxarium ecclesiae Constantinopolitanae, Bruxelles 1902, col.822, V.V.Latysev, Menologii Anonymi Byzantini quae supersunt, t.2(Petropoli 1912), p. 339-441.

14 Theophanes, ed.C.de Boor, Theophanis Chronographia, t.1(Leipzig 1882), p.367-368. Հմմտ. Թեոփանես Խոստովանող, Թարգմ. բնագրից...Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1989, էջ 80:

Ահա թե ինչ ենք ընթերցում օգոստոսի 23-ին, Կալինիկոսի հիշատակման օրը. «Սկզբում, Բլախեռնի Սուրբ Աստվածածին եկեղեցում, նա եղել է երեց և գդեստապահ: Իր աչքի ընկնող հատկություններ ի պատճառով, նոր Հուստինիանոսի, Հերակլից հետո վեցերորդ կայսեր ժամանակ նա ընտրվեց Կոստանդնուպոլսի արքեպիսկոպոս: Վերջինս նրան բավական դժվար կացության առջև կանգնեցրեց: Մի օր նա նրանից պահանջեց մի աղոթք պատրաստել մայրաքաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցին քանդելու համար: Սուրբը պատասխանեց, որ աղոթքը կարող է ծառայել կառուցմանը և ոչ թե քանդելուն: "Աստված, ասաց նա, Տիեզերքը ստեղծել է հարատևության համար և ոչ թե ոչնչացնելու": Այն ժամանակ երբ ուղարկվածները, որոնք պահանջում և ուժով պարտադրում էին կայսերական հրամանը կատարել, գտնվում էին նրա մոտ, երջանիկը բավական բարձր բացականչեց. "Փառք Քրիստոս Աստծուն, որը չարչարվե՛ց (Δόξα Χρίστω τῶ Θεῶ τῶ ἀνεχομένω) և հենց այդ պահին եկեղեցին քանդվեց»:

Ըստ մեր կարծիքի, այս պատմության մեկնակետը ամբողջությամբ գտնվում է Քրիստոս-Աստված-չարչարյալ կարճ աստվածաբանական բանաձևում. սա է Սահակ Զորափորեցու Թղթի, հայկական ծիսական ավանդույթների և սովորույթների ու, վերջապես, Հուստինիանոս Բ-ի Թեոդոսուպոլսում հրավիրած եկեղեցական ժողովի ողջ աստվածաբանությունը, որն այստեղ հարձակման է ենթարկվում: Բանաձևի հեղինակը ամբողջությամբ վրիպել է Թեոփանի, Կեդրենուսի և Մենոլոգի ուշադրությունից:

Հայսմավուրքային պատմությունը ընդգծելով պատմում է, թե ո՞ր աստիճանի է Հուստինիանոս Բ-ի վրեժխնդրությունը հարվածել նախ և առաջ Կալինիկոսին: Կրկին մեջբերենք. «Երբ իր կեղծ ընթացի և իր սխալի ահագնության պատճառով կայսրը պատժվեց, հաշմվեց նրա քիթն ու լեզուն և աքսորվեց Խերսոնես, այնտեղից նա բուլղարների օգնությամբ վերադարձավ, հարձակվեց Կոստանդնուպոլսի պարիսպների վրա և համոզեց պատրիարքին ու սենատին գալ իր մոտ և ընդունել իրեն: Այնուհետև նա ուրացավ ահարկու Խաչին, սուրբ ավետարաններին, Քրիստոսի մարմնին ու արյանը տված երդումները: Եվ հենց որ վերականգնվեց, քաղաքը լցրեց սպանվածներով: Նրա զինվորները ձերբակալեցին երջանկահիշատակ Կալինիկոսին և աքսորեցին Հռոմ: Հուստինիանոսը նրան մեղադրում էր իր քթի և լեզվի հաշմման և ապստամբությանը աջակցելու համար, որոնց Աստծո ամենաբարձրյալ պաշտոնյան որևէ մասնակցություն չէր ունեցել: Հռոմում նրան բանտարկեցին քաղաքի պարիսպներում և թաքցրեցին արտաքին աշխարհից: Քառասուն օր անց, նրան ազատեցին մեկուսարանից և գտան դեռևս կենդանի, սակայն մահամերձ: Չորս օր անց նա մահացավ՝ կյանքը տալով Տիրոջը: Եվ նա թաղվեց Պետրոսի և Պողոսի եկեղեցում, ինչպես, ըստ մի տեսիլքի, սուրբ առաքյալները նրան թույլ տվեցին տեսնել Պապին»:

Որքան էլ առասպելական բնութագիր ունենա Կալինիկոսի պատիժը, այս պատմությունը պարզորեն ցույց է տալիս եկեղեցական և քաղաքացիական ոլորտների որպիսությունը, այլ կերպ որակելով սկզբնավորման պահից հակադիր այս կամ այն իշխանության յուրաքանչյուր կողմը: Շատ մեծ է հավանականությունը, որ պատրիարքի նկատմամբ Հուստինիանոս Բ-ի թշնամական վերաբերմունքը հիմնված է Հինգվեցյան ժողովի Հայաստանին վերաբերող որոշումները

վերացնելու վերջինիս համոզումով. մի երկիր, ուր, ավելի շատ քան այլուր, ծեսը և ավանդույթը վարդապետության հետ ամբողջություն էին կազմում:

Սրանով բավական լավ է բացատրվում այն, թե ինչու՞ էր Հուստինիանոս Բ-ը 710 թ. ցանկանում, Հինգվեցյանի համաձայնությունը ամրապնդելու համար, հրավիրել Կոստանդին Ա պապին, այն պահին, երբ միևնույն ժամանակ հռոմեացիները Հայաստանին չէին ցանկանում պարտադրել սեփական ավանդույթներից հրաժարում[15]: Սա նույն եկեղեցական քաղաքականությունն էր, որի սկիզբը դրվել էր 689 թ., այն պահին, երբ Կոստանդնուպոլիս էին հրավիրված միայն հինգ հայ եպիսկոպոս, ինչպես նաև Հռոմի պապը, որը հիշելով իր նախորդի՝ Մարտինի հետ կապված դիպվածը, պահպանում էր կայսեր նկատմամբ հնազանդությունը: Գեռական շահերից ելնելով, նա նախընտրում էր իրագործել եկեղեցական միությունը ի շահ կայսրության միասնության: Իր նախորդ Հուստինիանոս Ա-ը ևս փորձում էր գտնել միասնական աստվածաբանական հիմք՝ ավելի մեծ քաղաքական միություն իրագործելու համար: Այդ պատճառով էր նա զայրույթի թիրախ դարձրել եկեղեցական մի պաշտոնյայի, որը մեղադրում էր կայսերը հայկական տիպի անապականության հարելու մեջ[16]: Սակայն այնպես, ինչպես 693 թ. Թեոդոսուպոլսի ժողովում, բացի հակաքաղկեդոնականությունից, Հուստինիանոսը համաձայնվեց նրանց բոլոր ավանդությունների հետ. 710 թ. նա որևէ դժվարություն չունեցավ հռոմեացիներին նրանց հետ մերձեցնելու համար: Նրա նպատակը չէր ծիսական արարողության միասնականացումը: Եկեղեցու կողմնակիցների տեսանկյունից, ծիսական արարողության և աստվածաբանության կապը շատ ավելի սերտ էր: Դրանում ենք տեսնում Կալինիկոսի և Հուստինիանոս Բ-ի բախման հիմքը:

Ունենք նաև Ղևոնդ պատմիչի մի հատվածը, որը մենք կցանկանայինք վերընթերցել մի ավելի հիմնավորված ենթատեքստում, քան այն, ուր նա օգտագործվել է մինչև այժմ: 1932 թ., Կ. Գոլսի պատրիարքության վավերագրերի ցանկում, Վ. Գրյումելը Կյուրեղ պատրիարքի տարիներին արձանագրել է մի վավերագիր, որի հիմքում ընկած է հայ պատմիչ Ղևոնդի վկայությունը: 711 թ. ամռան տակ մատնանշվում է. «Պատրիարքի և եպիսկոպոսների կողմից կայսեր հրամանով Ամբատ կյուրոպաղատի և հանցագործ Հայերի դեմ Փոթի քաղաքը հափշտակելու կապակցությամբ գրված բանադրանք: Այս բանադրանքի բանաձևը արձակված է յուրաքանչյուր տարվա Զատկի օրը ընթերցելու համար, քանի որ հանցանքը կատարվել է այդ տոնին»[17]: Այս տեղեկության հիմք է դարձել Ղևոնդի մի այլ հատվածը, որը տեղի է տվել բացարձակապես տարբեր մեկնությունների:

---

15 Cf. H.Ohme, Die sogenannten "antirömischen Kanones" des Concilium Quinisextum, in G.Nedungatt, The council in Trullo revisited [cité note], p. 307-321.

16 Cf.M.Jugie, L'empereur Justinien a-t-il été aphthartodocète ? In Échos d'Orient, 31(1932), p. 399-402.

17 V.Grumel, Les régestes des actes du patriarcat de Constantinople, vol. 1.Les Actes des Patriarches. Fasc.1.Les régestes de 381 à 715 (Paris 1932), p. 127-128.

Ամենից առաջ հարկավոր է ճշտել, թե ո՞վ է եղել Սմբատ Կյուրոպաղատը, որին չի կարելի նույնացնել Վարազ–Տիրոցի որդի Սմբատի հետ: 693 թ. նա հաջորդել է Ներսես կամսարականին Կյուրոպաղատի պաշտոնում: Այս վերջինին 698 թ. նշանակել է Հուստինիանոսը իր 689 թ. ռազմարշավի ընթացքում: Ոչ ավելի վաղ, քան 695 թ. արաբական ռազմարշավը, և ոչ ավելի ուշ, քան 697 թ., երբ հայ նախարարները Սահակ Գ–ի հետ աքսորվեցին Դամասկոս: Սմբատը ազատվել է մոտ 700 թ. և նորից գլխավորել դիմադրության շարժումը Հայաստանում: Ռազմական պարտությունները կայսեր թույլտվությամբ նրան ստիպեցին մեկուսանալ Մենգբելիայի Փոթիում, Սև ծովի ափին, ուր նա ապաստանում է 704/5–ից 710/1 թթ. միջև[18]*:*

Ղևոնդի հատվածը, որից Հայր Գրյումելը վերցնում է իր տեղեկությունը, դեռևս պահանջում է թվագրել: Հատվածի ինքնատիպությունը արտահայտված է հատկապես «մինչև ցայսօր» եզրափակիչ բանաձևում, որը սակայն թույլ չի տալիս ենթադրել, որ իրողությունը տեղի է ունեցել այն ժամանակաշրջանում, երբ Ղևոնդը հավաքում էր իր պատմության նյութերը: Խնդիրն այն է, թե ինչ տիպի վավերագրեր է իր տրամադրության տակ ունեցել Ղևոնդը: Արդեն, Վարազ–Տիրոցի որդու մասին վերևում ընթերցված հատվածից ակնհայտ է, որ սկզբնաղբյուրը սերում է Հուստինիանոս Բ–ի շրջապատից: Թերևս դա է այստեղ պատճառը: Թարգմանենք ուղղակիորեն Ղևոնդի բնագիրը: Այն բանից հետո, երբ արաբները վստահեցրեցին աքսորված հայերին, որ նրանց վնաս չեն պատճառի. «Il furent rassurés par leurs serments, ils prirent la ville dans laquelle ils résidaient, et les trésors de la ville et les ustensiles de l'Église, il emportèrent le butin et retournèrent en Arménie, se coupant de l'empereur des Grecs. Ce qu'apprenant, l'empereure des Grecs se repentit devant une telle ingratitude, et convoquant les principaux dignitaires de l'Église, les métropolites et les archevêques, il leur ordonna de les anathématiser par écrit dans un écrit, et au moment de la célébration de la Pâques, il ordonna qu'on fasse lecture au sujet de l'ingratitude commise, car c'est le jour de Pâques qu'ils commirent cette œuvre d'impiété. Et en la même fête on lit d'année en année le même anathème jusqu'à ce jour» *(Եւ իբրև վստահ եղեալ յուխտադրութիւն նորա՝ առին զքաղաքն յորում բնակեալ էին, և զգանձս քաղաքին և զսպասս եկեղեցեացն յափշտակեալ յաւարի՝ դարձան ի Հայս, հատուածեալք ի կայսերէն Յունաց: Եւ կայսերն լուեալ՝ ստրջացաւ ընդ եղեալ ապիրատութիւնն. և կոչեցեալ զառաջնորդս եկեղեցեաց, զմետրապոլիտն և զարքեպիսկոպոսունս՝ և հրամայէր նոցա նզովս գրել ի մատենի, և ի կատարման տօնին Զատկաց հրամայէր ընթեռնուլ ի վերայ գործողաց ապիրատութեանն. քանզի ի տօնին յայնմիկ գործեցին զգործ անօրէնութեան: Եւ ի նոյն տօնի կարդաւորեցին ամի ամի զնոյն նզովս ընթեռնուլ մինչև ցայսօր...)*[19]*: Ի՞նչ էր տեղի ունեցել իրականում, ո՞վ էր պատճառ դարձել նման նզովքի:*

---

18 Voir M.van Esbroeck, Le discours de Sahak III [տե՛ս 8–րդ ծանոթ.], p. 359.

19 Հրատ. եզեանց [տե՛ս ծանոթ. 11], էջ 38, ԺԳ գլուխ:

Ռ. Գրուսեն այս հատվածում տեսնում էր դավաճանության պատճառով բանադրանք, քանի որ Սմբատը ի նպաստ արաբների թալանել էր քաղաքը[20]: Վ. Գրյումելը բացառում է այդ պահին Վարդան-Փիլիպիկոսի կայսր լինելը. և կայսր է համարում Հուստինիանոս Բ-ին, որը վերանայում է 705 թ. շնորհված հյուրընկալությունը[21]: Ղևոնդի այս բնագիրն ավելի շատ ինչ-որ եկեղեցական շրջադարձի մասին է, քան ռազմական գործողության: Դա խաղի մեջ մտնող հակաքաղկեդոնականությունն էր, այն, ինչ Հուստինիանոս Բ-ը որոշակիորեն չէր ցանկանում վավերացնել: Հայազգի Փիլիպիկոս-Վարդանը, որը 711-713 թթ. հաջորդել էր Հուստինիանոս Բ-ին (հետագայում նրան մահապատժի ենթարկեցին), իր տարածքներից հալածում էր Գրիգոր Լուսավորչին հետևող հայերին, իսկ արաբները նրանց բնակեցնում էին Մելիտենեի տարածքում[22]: Ղևոնդի սկզբնաղբյուրը բացահայտորեն հայ քաղկեդոնականների միջավայրից է:

Մեզ է հասել մի այլ վկայություն ևս, դա Թեոփանեսի տեղեկությունն է Աբասգիայի սպաթար Լևոնի մասին: Ստ.Գերոն դասակարգում է ապագա Լևոն Գ-ին վերաբերող առասպելական և հավաստի սկզբնաղբյուրները: Լևոն Գ-ը ծագումով Մարաշից (հնում՝ Գերմանիկե) էր և կոչվում էր Սիրիացի: Այդ քաղաքը վերանվաճել էր Հուստինիանոս Բ-ը 685 - 690 թթ. միջև: 695 թ. կայսրը հրամայել էր, առանց որոշակի նպատակի, այն ժամանակ դեռևս տասնամյա երեխա Լևոն Գ-ին իր հոր հետ բերել Թրակիա: Երիտասարդ Լևոն Գ-ը նրան հավատարիմ մնաց. երբ 705 թ. Հուստինիանոս Բ-ը կրկին Բյուզանդիա վերադարձավ, ապագա Լևոն Գ-ը նրան դիմավորեց 500 ոչխարով: Մոտավորապես 705-707 թթ., Հուստինիանոսը նրան սպաթարիոսի կոչում տվեց և վերցրեց իր բարեկամների շրջանակը, սակայն գահը ժառանգելու մասին շշուկները նրան շնորհազրկելու համար պատճառ հանդիսացան: Սպաթարիոս Լևոնը այնուհետև ուղարկվեց Աբասգիա, նվաճելու համար Ալանիան կամ Օսեթիան[23], որը գտնվում է մենգրելական Փոթիի մոտ, որն այդ պահին աքսորում գտնվող Սմբատ կյուրոպաղատի նստավայրն էր: Կովկասյան այս արկածի խճողված շարադրանքը մեզ է հասցրել Թեոփանեսը 717 թ. դեպքերի իր շարադրանքում, որը մանրամասն քննության է ենթարկել Մ.Կանարը[24]: Երբ Լևոնը 711 թ. կարողացավ միջոցներ գտնել Կոստանդնուպոլիս վերադառնալու համար, նրա հիմնական նեցուկը դարձան իր հարևան հայազգի նախարարները: Վերջիններս չեն երևում միայն Ի.

---

20 R.Grousset, Histoire de l'arménie des origines à 1071, Paris 1973, p. 314.

21 V.Grumel, op.cit., p.128.

22 Laurent-Canard, op.cit., p. 259-260.

23 Տե՛ս M.van Esbroeck, Le discours de Sahak, p. 358, ուր հենվում եմ հիմնականում St.Gero, Byzantine Iconoclasm during the Reign of Leo III, with Particular attention to the Griental sources, Louvain 1973 ուսումնասիրության վրա:

24 M.Canard, L'aventure caucasienne du apthaire Léon le futur empereure Léon III, dans Revue des Études arméniennes, NS, t. 8(1971), p. 353-357.

Ս. Չիչուրովի քննության մեջ[25], այնուհանդերձ Լևոն Գ–ի բազմաթիվ դրական գծերն ի հայտ են գալիս հայկական ավանդույթում, ուր նա հանդես է գալիս իբրև նոր Մովսես (Moïse redivivus)[26]:

Վերջապես գանք մեր բազմաչերտ գրության վերջին մասին: Սահակ Գ–ի երկարաշունչ դավանաբանական նամակի վերջին մասում ընթերցում ենք մի հավելված կոչ, որի բնագիրը հետևյալն է. «Եւ դու, այրդ Աստուծոյ, պի՞նդ կաց ամենայն իրաւք, որպէս և կացեալդ ես գեղեցկաբար, և մի՛ տար տեղի ամենևին այնոցիկ որք խոտորեալ են յաւանդութենէ հարցն սրբոց, զի Քրիստոս զքեզ զէն հաւատոյ Հայաստանեայցս կամեցաւ առնել յաչխարհիդ յայդմիկ, և արդ անդրդուել կա՛ց միշտ ի ճշմարտութեանն, և մի ի պատկերապաշտութիւն նոցա և մի յայլ ինչ խոտորեսցիս, զի պատկեր Աստուծոյ խաչն է տուեալ մեզ ի պաշտաւն, զի պաշտեսցուք զԱստուած խաչիւն իւրով սրբով, որպէս և ամենայն Քրիստոնեայք և հարքն սուրբք յառաքելոցն մինչև ցայժմ: Իսկ զայլ պատկեր հրաժարեցուցանէ ինքն Աստուած ասելով, թէ՝ Զի՞նչ նմանութիւն յիս տեսէք՝ զի պատկեր ինձ ձեւացուցէք. ապա ուրեմն այլ պատկեր երևելի չէ՛ պաշտելի բայց միայն խաչն: Իսկ որք այլ պատկեր արարին՝ ըստ հեթանոսական սովորութեան արարին, և ոչ ըստ աստուածապաշտութեան աւրինացն, որ հրամայեալ է մեզ ի գրոց սրբոց: Բայց դու, խնդրողդ ուղիղ հաւատոյ բանի, զայս ամենայն առեալ և առաւելեալ, իմա՛ զհաւատոյս զաւրութիւն, և արիաբար քաջացիր և յաղթեա՛ հերձուածողական հնարից, և առ ոչինչ համարեա զքանս նոցա այլայլականս»[27]: Այս բնագիրը, ինչպես արդեն ասել ենք, 693 թ. հասցեագրվել է Ամբատին, որն անվանված է նաև կյուրոպաղատ: Աստվածաբանական մեծ տրակտատում, որը նախորդում է սրան, Սահակ Գ–ը ցույց է տալիս, որ երկաբնակությունը ինքնաբերաբար ձուլված է պատկերամարտության հետ: Իրոք, եթե Քրիստոսի մեջ կա աստվածային բնությունից տարբերվող մարդկային բնություն, այն բոլորն, ինչ նրանում երկրպագվում է, դառնում է մարդու ձեռքով ստեղծված պատկեր: Սակայն խաչը, որը Սահակի ողջ ճառի կիզակետն է, դուրս է այդ օրենքից: Նրանում, իրոք, մարդկային բնությունն ավելի խորքում դառնում է աստվածային բնություն: Միայն այստեղ է արդարացվում երկրպագությունը, առանց խառնվելու մաքուր մարդկային կարողություններին:

Պետք է հավատալ, որ բանտարկյալներին ազատելու նպատակով ձեռնարկված ճանապարհորդության ժամանակ, մոտ 703 թ., սրբի պսակով մահացած բարձրաստիճան հոգևորականի նմանատիպ կտակը պետք է հետապնդեր Ամբատին ողջ կյանքում, որպես կառավարման մի ուղղություն, որը թույլ է տալիս հասկանալ նրա հայացքների արմատական փոփոխությունը 711 թ.: Սակայն սուրբ կաթողիկոսի այս վերջին ուղերձը արդյո՞ք որևէ հետք չի թողել Լևոն սպաթարի վրա, որը վստահաբար կարող ենք ասել, մինչև Կոստանդնուպոլսի գրավումը բարեկամական կապեր է ունեցել Ամբատ կյուրոպաղատի հետ: Իհարկե, մինչև

---

25 И.С.Чичуров, Византийские исторические сочинения, Москва 1980, с. 42-44 և Թեոփանեսի ձանոթագրությունը:

26 Cf. St.Gero, op.cit., 189-198.

27 M.van Esbroeck, Le discours de Sahak, p. 438-439.ԳԹ, 1901, էջ 482:

Լևոն Գ-ի 711 թ. պատմական թատերաբեմի վրա հայտնվելը, դեռ պետք է լիներին և երկու քիչ կառավարած կայսրեր՝ Անաստաս Բ-ը և Թեոդոս Գ-ը: Սակայն երբ Լևոն Գ-ը կանչվեց պաշտպանելու Կոստանդնուպոլսի պարիսպները, նա կազմակերպեց ոչ թե պատկերների, այլ միայն խաչի շքերթ[28]: Մենք չենք կարծում, թե այդ ակամա գործողությունը Սահակ Գ-ի կտակից ազդված Սմբատի ուղերձից անկախ է եղել: Լևոն Գ Մարաշցին հավանաբար ավելի լավ հայերեն էր խոսում, քան արաբերեն: Օրթոդոքսների լեգենդները, որոնք Բյուզանդիայում ստեղծվում էին պատկերամարտների ղեկավարների դեմ, ընդգծում էին նրանց նմանությունը արաբների հետ և ի վերջո, նրանց ուսմունքը համարելով սատանայական, կապում էին իսլամի ագրեսիվության հետ: Սակայն, ըստ մեր պատկերացման, հանձին Սահակ Գ-ի կտակի, մենք ունենք մի փաստաթուղթ, որը թույլ է տալիս ապացուցել, որ 726 թ. Խալկեի պատկերի ոչնչացումը ինչ-որ կայսեր նորացման ժամանակ կամակորության արդյունք չէ: Կոստանդնուպոլսի պաշտոնական երկաբնակությանն անդրադառնալիս, Սահակի ուղերձն առավել մեծ ուշադրության առարկա պետք է դարձնել:

Ֆրանսերենից թարգմանությունը

Պատմ. գիտ. դոկտոր **Ա. Ա. ԲՈՋՈՅԱՆ**

---

28 St.Gero, op.cit.,p.37-38 et 132-141. M.van Esbroeck, Le discours de Sahak, p. 358.